«Կանայք տնօրենների խորհրդում»
վերապատրաստման անցկացման պայմանները

1.1. Վերապատրաստումը նպատակ է հետապնդում խթանել հայաստանյան կազմակերպությունների տնօրենների խորհրդում կին անդամների ներկայացվածությունը:

1.2. Անկախ Վերապատրաստման նպատակից՝ դրանում խրախուսվում է նաև տղամարդկանց մասնակցությունը:

2. Վերապատրաստման հասցեատերերի շրջանակը

2.1. Վերապատրաստման հիմնական հասցեատերերն են՝

2.1.1. խորհրդի գործող անդամները, ովքեր ցանկանում են արդիականացնել իրենց գիտելիքները խորհրդի գործունեության և կորպորատիվ կառավարման ժամանակակից միտումների ու գործիքակազմի վերաբերյալ,

2.1.2. գործադիր թիմի ղեկավար անդամները և կորպորատիվ կառավարման պատասխանատուները (կորպորատիվ քարտուղարներ, ներքին աուդիտորներ, ռիսկերի կառավարման, համապատասխանության պատասխանատուներ, բիզնես խորհրդատուներ և այլք), ովքեր իրենց հետագա աճը տեսնում են խորհրդի անդամի կարգավիճակում,

2.1.3. բիզնեսի սեփականատերերը, ովքեր նպատակ ունեն իրենց կազմակերպություններում ձևավորել խորհուրդ կամ բարելավել գործող խորհրդի գործունեությունը,

2.1.4. պետական իրավասու այն մարմինների աշխատակիցները, որոնք նպատակ ունեն խթանել կորպորատիվ կառավարման միջավայրի զարգացումը Հայաստանում,

2.1.5. կորպորատիվ կառավարման հիմնախնդիրներով հետաքրքրված անձինք, որոնց տեսակարար կշիռը չի կարող գերազանցել Վերապատրաստման մասնակիցների ընդհանուր թվի 10%-ը:

3. Վերապատրաստման մասնակիցներին ներկայացվող պահանջները

3.1. Վերապատրաստման մասնակիցը պետք է լինի Վերապատրաստման հասցեատեր և ունենա՝

3.1.1. բարձրագույն կրթություն և առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային փորձառություն,

3.1.2. LinkedIn սոցիալական ցանցում հասանելի օգտահաշիվ:

3.2. Մասնագիտական աշխատանքային փորձառության պահանջ կարող է չկիրառվել միայն բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական կուրսերում սովորող ուսանողների նկատմամբ, ովքեր հետաքրքրված են կորպորատիվ կառավարման հիմնախնդիրներով:

4. Վերապատրաստմանը դիմելու կարգը

4.1. Վերապատրաստմանը մասնակցելու հայտադիմումը ներկայացվում է Կենտրոնի համացանցային էջի միջոցով մինչև ս.թ. նոյեմբերի 7-ը, ժամը՝ 18:00:

4.2. Վերջնաժամկետի ավարտից հետո ստացված հայտադիմումները չեն դիտարկվում:

4.3. Հայտադիմումին կից ներկայացվում են՝

4.3.1. հետաքրքրվածության նամակ, որտեղ պետք է հիմնավորվի Վերապատրաստմանը մասնակցելու շահագրգռվածությունը և նշվի ձեռք բերված գիտելիքների պրակտիկ կիրառման հնարավորությունը,

4.3.2. առնվազն մեկ երաշխավորագիր, որը պետք է ստորագրված լինի երաշխավորող անձի կողմից:

4.4. Հետաքրքրվածության նամակը և երաշխավորագիրը ներկայացվում են հայերեն՝ լուսապատճեն տարբերակով:

5. Վերապատրաստման անցկացման եղանակները

5.1. Վերապատրաստումն անցկացվում է դասավանդման հեռավար և առկա եղանակների համադրմամբ՝ ըստ հայտարարված ժամանակացույցի:

6. Ինքնուրույն աշխատանք

6.1. Վերապատրաստման շրջանակներում մասնակիցներին առաջադրվում է ինքնուրույն աշխատանք, որը նպատակ է հետապնդում մասնակիցների ջանքերով ներկայացնել կորպորատիվ կառավարման տարբեր հիմնախնդիրների էությունը և խրախուսել մասնակիցների միմյանցից սովորելու հնարավորությունները:

6.2. Կենտրոնը ներկայացնում է ինքնուրույն աշխատանքների թեմաների ոչ սպառիչ ցանկը և մասնակիցներին քաջալերում իրենց մասնագիտական հետաքրքրությունների շրջանակում ինքնուրույն աշխատանքների թեմաների ներկայացումը և մշակումը:

6.3. Ինքնուրույն աշխատանքները կարող են լինել ինչպես անհատական, այնպես էլ խմբային: Հաշվի առնելով Վերապատրաստման մասնակիցների միջև մասնագիտական կապերի և անձնական շփումների կայացման անհրաժեշտությունը՝ Կենտրոնը խրախուսում է խմբային աշխատանքները:

6.4. Եթե Վերապատրաստման մի քանի մասնակից ընտրում է նույն թեման, Կենտրոնն ապահովում է նրանց միջև կապի հաստատումը:

6.5. Հնարավորության դեպքում մասնակիցը կարող է խմբային աշխատանքին մասնակից դարձնել Վերապատրաստման նախորդ փուլերի շրջանավարտներին կամ «Հայ կանայք տնօրենների խորհրդում» ցանցի մասնակիցներին:

6.6. Ինքնուրույն աշխատանքի ծավալը չպետք է գերազանցի 500 բառը: Աշխատանքը պետք է լինի վերնագրված՝ հեղինակի (հեղինակների) անվան և ազգանվան նշումով, հղումներ ունենա օգտագործված գրականությանը, գրված լինի պարզ ու գրագետ հայերենով:

6.7. Ինքնուրույն աշխատանքը կարելի է ներկայացնել տեսահոլովակի ձևաչափով:

7. Եզրափակիչ քննություն

7.1. Վերապատրաստումը եզրափակվում է թեստային քննությամբ:

7.2. Եզրափակիչ քննությանը մասնակցելու հնարավորություն ունեն միայն այն անձինք, որոնք ակտիվորեն մասնակցել են Վերապատրաստման միջոցառումների առնվազն 60%-ին:

7.3. Եզրափակիչ քննությունն անցկացվում է միայն առկա եղանակով՝ ըստ հայտարարված ժամանակացույցի:

7.4. Եզրափակիչ քննության թեստային հարցերը մշակվում են Վերապատրաստման ձեռնարկների հիման վրա:

7.5. Թեստի հարցերի առնվազն 70%-ին ճիշտ պատասխանած մասնակցին շնորհվում է Վերապատրաստումը հաջողությամբ ավարտելու մասին հավաստագիր:

7.6. Թեստի ճիշտ պատասխանների նվազագույն շեմը չհավաքած մասնակցին տրվում է հավաստագիր Վերապատրաստմանը մասնակցելու մասին կամ թեստը վերահանձնելու հնարավորություն:

7.7. Թեստի վերահանձնումը հնարավոր է միայն մեկ անգամ:

8. Վերապատրաստման մասնակիցների պարտավորությունները

8.1. Վերապատրաստման մասնակիցները պարտավոր են՝

8.1.1. ապահովել Կենտրոն ներկայացվող տվյալների և տեղեկությունների արժանահավատությունը,

8.1.2. ակտիվորեն մասնակցել Վերապատրաստման շրջանակներում կազմակերպվող միջոցառումներին՝ անկախ դրանց հրավիրման եղանակից,

8.1.3. ժամանակին հաճախել Վերապատրաստման միջոցառումներին՝ հետևելով հայտարարված ժամանակացույցին,

8.1.4. հեռավար միջոցառումների ընթացքում տեսախցիկը պահել ակտիվ վիճակում, խոսափողը միացնել միայն դասընթացավարի կամ մասնակիցների հետ հաղորդակցվելիս,

8.1.5. սահմանված ժամկետներում ընտրել ինքնուրույն աշխատանքի թեմա, ինչպես նաև սահմանված ժամկետներում մշակել և ներկայացնել ինքնուրույն աշխատանքը, որը ենթակա է քննարկման Վերապատրաստման շրջանակներում հատուկ այդ նպատակով հրավիրվող նստաշրջանի ընթացքում,

8.1.6. արձագանքել և հաղորդակցվել Կենտրոնի պատասխանատուների հետ ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր եղանակով:

8.2. Անձինք, որոնք չեն մասնակցել Վերապատրաստման միջոցառումների 40 և ավելի տոկոսին, չեն թույլատրվում թեստային քննությանը: Նրանց չի շնորհվում որևէ հավաստագիր:

9. Կենտրոնի պարտավորությունները

9.1. Կենտրոնը պարտավոր է՝

9.1.1. Վերապատրաստումը կազմակերպել և անցկացնել՝ ըստ հայտարարված ծրագրի և ժամանակացույցի,

9.1.2. Վերապատրաստման ծրագրի, ժամանակացույցի, անցկացման եղանակի հնարավոր փոփոխությունների մասին ծանուցել մասնակիցներին առնվազն 7 աշխատանքային օր առաջ,

9.1.3. ապահովել Վերապատրաստման մասնակիցների հաճախումների հաշվառումը,

9.1.4. մասնակիցներին ժամանակին տրամադրել Վերապատրաստման նյութերը,

9.1.5. սույն կարգով նախատեսված սահմանափակումները կիրառելու դեպքում ներկայացնել հիմնավոր փաստարկներ: